Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3650

Սամսոնի երգարան։
երգեր և դարձերգեր։

Սմիրնա
1879

891.99ս
Ս-26

891.54
Մ-2

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐ-ԵՐԳԵՐ

ԽՄԲԱԳՐԵՑ

Եղնիկ Յովհաննայ Երզնկեանց։

Ուսուցիչ Հայնագրութեան Վերսիսեան
Ազգային Հոգևոր Դպրանոցի։

ՏՓԽԻՍ

Յովհաննէս Մարտիրոսեանցի Տպարանում

1880

891.995
Ս-26 ա.
35

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԳԵՐ ԵՒ ՊՍԼՐ-ԵՐԳԵՐ

ԽՄԲԱԳՐԵՑ

Եղնիկ Հայանայ Երզնկեանց։

Ուսուցիչ Զայնագրութեան Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրանոցի։

1001
848
Գ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայկական Գրադարան
Ս.Ս.Ր.Հ. Ազգային Գրադարան
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏՓԽԻՍ

Յովհաննէս Մարտիրոսեանցի Տպարանում։

1879

Дозволено цензурою. Тифлисъ, 21 Октября 1879 г.

46771-ահ
2004

Типографія И. Мартиросіанца, на Орб ул. д. № 5.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Աչքի առաջ ունենալով, որ մեր միջնակարգ և ծխական ուսումնարանների ամենաստորին դասարաններում և նորա բաժանմունքներում երգեցողութիւնը դաս է տրվում միայն լսողութեամբ ականջով, առանց ձայնագրութեան, հետևապէս և մեր ձայնագրեալ մանկական երգարանը շատ քիչ պէտքէ օգնէ նոցա. ուստի այդ տեսակ աշակերտների համար, ես՝ վերցնելով ձայնագրեալ մանկական երգարանի բոլոր երգերը, բացի ժողովրդական երգերից, տպագրել տուեցի առանց ձայնանիշների. սակայն ուսուցիչների ղեկավարը դարձեալ պիտի լինի նա— ձայնագրեալ մանկական երգարանը, որտեղ գրուած են մանրամասն տեղեկութիւններ թէ երգերի, թէ եղանակների և թէ նոցա դասաւորութեանց մասին։

ՏԷՐ-ԵԶՆԻԿ։

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳԵՐ

№ 1

ԱՂՕԹՔ ՄԱՆԿԱՆՑ

Ով, երկնքի երկրի տէր,
Դու մեր բարի Հայր.
Խնդրումենք քեզ, մաղթանքներս ընդունիր,
Եւ շնորհիր բարի միտք,
Որ լաւ ուսանինք,
Եւ բարի լինենք։

№ 2

ԲԱՐԻ ԱՌԱՒՕՏ

Խաղաղ գիշեր մենք անցնելով,
Նոր օր կրկին բարևենք,
Դու, տէր, որ մեզ միշտ պաշտպան ես
Եւ մեզ բարիք տալիս ես,

Քեզ օրհնեն մեր բերանները,
Քեզ օրհնեն մեր երգերը։

2. Քաղցր քնով ամրացրիր
Մեր ոյժերը, դու, ով տէր,
Կամենումենք, այժմ գործ դնել
Մեր թարմացած մտքերը.
Լաւ ըմբռնել, ինչ որ լսենք,
Միայն օրհնիր մեր գործքը։

№ 3

ՈՂՋՈՅՆ ՍՈՒԱՒՕՏԵԱՆ

Թարմ և զուարթ արթնանալով՝
Ես պարտիզեկ վազեցի,
գիշերը անուշ քնելով,
Ես յետ մնալ չուզեցի.
Ահա՛ շրջան եմ մտնում,
Ես յաջ ու ձախ ձեռ մեկնում,
Ողջոյն ձեզ, ընկերներ,
Դէհ, նորոգենք մեր երգեր։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՌԱՋՆԵՐ-ՄԱՐՇԵՐ

№ 4

ՊԱՐ-ԵՐԳ

1. Այսօր մենք շատ ուրախ ենք,
Երիք, ընկերք, մենք կարգով,
Շրջանաձև պար բռնենք.
Պար-երգ, երգեր մենք երգենք։
Հա՛, հա, հա, հա, հա, հա,
Այսօր մենք շատ ուրախ ենք,
Հա՛, հա, հա, հա, հա, հա,
Այսօր մենք լաւ խաղումենք։
2. Կրօնի դասը պատմումենք,
Հայ լեզուն վարժ կարդումենք,
Ռերանացի թելադրութիւն,
Առանց սխալի գրումենք։ Հա, հա, հա, և այլն։

3. Փոքր թուեր բերանացի
Դասատան մէջ հաշվումենք,
Իսկ մեծերը գրաւոր,
Մեր տներում վճռումենք։ Հա, հա, Լայլն։

4. Նկարչութիւն սիրումենք,
Տետրերն մաքուր պահումենք.
Եւ ուսուցչի տուած դասը
Մեծ ջանքով նկարումենք։ Հա, հա Լայլն։

5. Երգերը մեծ եռանդով
Խմբովին ուսանումենք,
Եւ մեծ դասամիջոցին,
Մենք ներդաշնակ երգումենք։
6. Հերիք է, բաւական է,
Որքան այսօր խաղացինք,
Դէհ, դասատուն շուտ վազենք,
Եւ մեր դասերն պատրաստենք։

№ 5

ՇԻՆԱԿԱՆԻ ԵՐԳ։

1. Ա՜յ մարդ, այսօր շատ քնեցար-հանջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր,
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ։

2. Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարին, գերանդիով հնձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հագչել կաղնիների հովումը։

3. Ա՜յ մարդ, վերկաց, սառը ջրով լուացուիր,
Գոտիկ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր,
Քանի հովէ, հունձդ արա՛ արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ։

4. Հունձդ կապէ, բարդդ բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձդ կատարի,
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կ'պատրաստեմ սեղանը։

№ 6

ԱՐԱՂԱՂ

Դու ինձ սա՛ս, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ,
Ասա՛, ի՞նչ ես շուտ զարթնում;
Ինչի՞ ես բարձր կանչում,
Եւ ինձ քնել չես թողում։

№ 7

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

1. Ամբողջ շաբաթ է, որ
Մենք փակուած ենք դպրոցում,
Գիշեր և ցերեկը
Անխոնջ պարապում։
Լա լա լա լա լա լա լա
Լա լա լա լա լա լա լա լա լա։ կրկնել։

2. Երկինքն է կապուտակ,
Արեգակը շատ պայծառ,
Օդը մեղմ հեզաշունչ,
Դաշտերը դալար։ լա լա լա և այլն։

3. Այսօրուայ կէսը մենք
Նուիրել ենք զբօսանքին,
Որ պատրաստուինք վաղուան
Բաղցր աշխատանքին։ լա լա լա և այլն։

4. Աշխատենք, քոյրեր, որ
Մեր դասերը պատրաստենք,
Բնութեան ժամանակ,
Վատահ դուրս ելնենք։ լա լա և այլն։

№ 8

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

1. Արևն իւր ոյժը կորցրած
Ամպերի տակ ծածկուեցաւ,
Սաստիկ քամին ողջ ծառերի
Տերևները վայր ածաւ։

2. Հատթռչուններ ու թիթեռներ
Անյայտացան դաշտերից,
Ծառը չունի կանաչ տերև,
Նա զրկվում է իւր զարդից։

3. Երկնքումը ամպի քուլէքն
Անձրևներ են պատրաստում,
Անտառը իւր տերևներով,
Աւուն տխուր կրկչում։

4. Ի՞նչն դաշտերի սողուններ
Եւ վայրենի թռչուններ,
Հատպում են իրանց համար
Մի ապահով տեղ գտնել։

№ 9

ՀՐԱՒԷՐ

1. Երի՛ք, ը՛նկերք, շուտ արէք,
Հ՚ուտով վարժատուն երթանք,
Դասերներս պատրաստենք,
Որ ժամանակին խաղանք։ } կրկնել։

2. Ով իւր դասը չգիտէ,
Եւ կամ սովրել ծուլանայ,
Նորան ո՛չ խաղ կայ, ո՛չ կեր,
Այս է պատիժը նորա։ } կրկնել։

3. Դասատան մէջ աւելորդ
Խօսակցութիւն չը պէտք է,
Հ՚ապա լաւ ուշադրութիւն,
Այս մեր ամենիս պարտքն է։ } կրկնել։

4. Ով որ հանդարտ և սիրով
Լ՚սէ իւր վարժապետին,
Նա կլինի մանաւանդ
Սիրելի և գովելի։ } կրկնել։

5. Մենք էլ կուզենք, որ լինենք,
Գովելի աշակերտներ,

Հ՚ապա ուրեմն, եղբարք,
Նստենք, կարդանք մեր դասեր։ } կրկնել։

№ 10

ՑԱՌԱՋ-ՄԱՐՇ

1. Երի՛ք, կարգով մենք շարուենք,
Եւ նոյն քայլով շուրջ առնենք.
Զոյգ զոյգ յառաջ խմբով դիմենք,
Այս կողմ, այն կողմ մենք չշեղուենք,
Ուղիղ բռնենք մարմիններս,
Ուղիղ մեր գլուխ, ոտք, կուրծքերս.
Կարգով դընենք մեր ոտներ,
Ձը թուլանան մեր ծընկներ,
Ազատ շարժենք թեւերս,
Ձ՚ընեղանան ընկերներս,
Ընկնելուց մենք զգուշանանք,
Բաւական է, առնենք կանգ։

№ 11

ՄԱՑԻՍ

1. Մայիս նոր օր բերում,
Եւ մեր հոգին վառվրռում,
Թո՛ղ տունդ, դուրս վազե՛ր,

Ճակտիդ պսակ հիսի՛ր,
Հէկ արև է փայլում,
Կանաչը գետին ծածկում,
Թռչնոց երգ, սրնդի ձայն
Հեռուից է լսվում։

№ 12

ՄԱՑԻՍԻՆ

1. Երբ մայիսին ես անցնումեմ անտառով,
Գեղեցկագոյն թռչուններ շատ եմ տեսնում,
Լա լա լա, լա լա լա, լա լա, լա լա, լա լա, լա։

2. Ամեն մէկը ուրախութեամբ երգելով,
Աշխատումէ տաք բուն շինել թփերում։ Լա Լայն։

3. Երբ անցնումեմ ես ծաղկապատ դաշտերով,
Հատ թիթեռներ ու բզեզներ եմ տեսնում, լա ևն.

4. Սև ու սպիտակ և հազար մի գոյներով,
Ծաղկից ծաղիկ թռչոտումեն ծըլվլում։ Լա Լայն։

5. Աշխ, շատ սիրուն, շատ գեղեցիկ է դաշտը,
որի վերայ ոչխար, տաւար և այծեր. լա լա Լայն։

6. Ամեն կողմից բառաչում են ու մայում,
և ինձ իրանց քաղցր ձայնով գրաւում։ Լա լա Լայն։

№ 13

ՔԱՑԼԱՓՈԽ

1. Մենք նոյն կարգով դառնումենք,
և նոյն քայլով գընումենք։
Լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա
Լա լա լա լա լա լա լա լա լա։

2. Մենք միշտ ուրախ ճեմումենք
և միշտ սիրով երգումենք։ Լա լա լա Լայն։

3. Մենք միշտ մաքուր հագնումենք,
Եւ միշտ միմեանց սիրումենք։ Լա լա լա Լայն։

4. Մենք մեր ծնողաց պատվումենք,
Եւ ուսուցչաց յարգումենք։ Լա լա լա Լայն։

5. Մենք դասատանը հանգիստ ենք,
Եւ դասերին ուշադիր ենք։ Լա լա լա Լայն։

№ 14

ՇՏԱՊ ՁԱՐԹՆԵՆՔ

Հտապ զարթնենք, տեղից ելնենք,
Լա լա լա լա լա լա,
Երագ ոտքով դուրս վազենք,

Լա լա լա լա լա,
Շէկ արևը գլուխ հանած,
Դուրս է կանչում ամենքիս։
Լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա
Լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՇՐՋԱՆԱՁԵՒ—ԵՐԳԵՐ

№ 15

ԹՌՉՆԻԿ

1. Թռչնիկն ահա, դէպ ինձ գալով,
Ոտքիս վերայ նստում է,
Կոցում բռնած մի նամակիկ
Հօրիցս ողջոյն բերում է։

2. Սիրուն Թռչնիկ, դարձիր, գնա,
Բարևիս հետ տար մի պաչ,
Ես չեմ կարող քեզ ընկերել,
Դեռ դասս չէ վերջացած։

№ 16

ՓՈՔՐԻԿ ՇՆԻԿ

1. Ի՜նչ սիրուն ես, դու իմ շնիկ,
Քանի այդպէս փոքրիկ ես,
Քեզ համար ես միս կը բերեմ,
Լաւ կերակուր, կուտեցնեմ։

2. Երբ որ դուն էլ կ՚մեծանաս,
Շատ դեղեցիկ բոյ կ՚առնես,
Ապա մեր տան հաւատարիմ
Դու պահապան կը լինես։

№ 17

Մանուկներ և Թռչնիկ

ՄԱՆՈՒԿՆԵՐ

1. Սիրուն Թռչնիկ բռնուեցար,
Ցանցից չես ազատուիլ,
Ոչինչ բանով աշխարհում
Քեզնից չենք բաժանուիլ,

ԹՌՉՆԱԿ

2. Ա՜խ, ձեր ընչին եմ պէտք ես,
Սիրելի մանուկներ,
Թողէք ինձ ազատ թռչեմ,
Բացէք ցանցիս դռներ։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

3. Չէ, չէ թռչնակ, չենք թողնիլ,
Մեզ մօտ կըմնաս.
Մենք քեզ շաքրէ հաց կ'տանք,
Կուտես, կուրախանաս։

ԹՌՉՆԱԿ

4. Ա՜խ, շաքրէ հաց չեմ սիրում,
Բաղցրեղէն չեմ ուտում,
Թողէք դուրս, մորեխներ
Շաքրից լաւ եմ հաշվում։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

5. Ա՜յնտեղ դաշտում ձմեռը
Գուցէ ցրտից սատակես,
Իսկ մեզ մօտ ոսկուց շինած
Վանդակի մէջ կը ապրես։

ԹՌՉՆԱԿ

6. Օ՜, մի՛ վախէք, ձմեռը
Տաք կողմեր կը թռչեմ,
Իսկ բռնուած դրախտն էլ
Ինձ բանտ կը համարեմ։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

7. Թռչնակ, թռչնակ, մենք ինչպէս
Քեզ կը գուրգուրէինք,
Չէինք թողնիլ որ տխրես,
Միշտ կուրախացնէինք։

ԹՌՉՆԱԿ

8. Հաւատում եմ, բայց ձեր սէրը
Ինձ միշտ կը վնասէր,
Որովհետև դորանով
Ինձս յաւիտեան կ'փակուէր։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

9. Ա՜շմարիտ է ով թռչուն,
Գերութեան չես տանել,
Ստուած քեզ հետ, դէհ, թռի՛ր,
Ազատ ուրախ եղիր։

№ 18

ՏԱՐՈՒԱՑ ԵՂԱՆԱԿՆԵՐ

1. Մարտը տալիս է ճնծաղիկ,
Ապրիլ կապույտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակ երգում անուշակ։

2. Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր,
Եւ այլ շատ հատուն մրգեր։

3. Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը բողկն ու տակը։

4. Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունվարին ծածկում սար ու ձոր,
Փետրվարին սկսում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր։

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պ. С. Р. Հ Публичная Библиотека
7/XI-1922
ԱՄԵՆԻԱ, Մասնաճյուղ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

№ 19

ՄԱՑՐ ԵՒ ԳԱՌՆԻԿ (Որդի)։

1. «Ի՞նչու կու լաս. դու գառնիկ».
— Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ.

2. «Ո՞վ ծեծեց քեզ, գառնիկ»։
— Մէկ ծեր, չար, կախարդ կնիկ։

3. «Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ։»
— Ծառի տակն էի, իմ մայրիկ։—

4. «Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ։»
— Մէկ մեծ փայտով, իմ մայրիկ։

5 «Ո՞րտեղդ զարկեց քեզ, գառնիկ։»
— Ոտիկներիս, իմ մայրիկ։ —

6 «Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ։»
Մէ՜, մէ՜, մէ՜, մէ՜, իմ մայրիկ։

№ 20

ԿՍԱԿՆԵՐ

1. Մէկ սիրտ լինինք և մէկ հոգի,
Միութիւնը գեղեցիկ զարդ է կեանքի։
Լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա։

ՎԱՐԴԷ ՊՍԱԿ

2. Վարդ ծաղկին լինենք նման,
Եւ օրինակ հեզութեան,
Թող վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վերայ։ լա լա լա և այլն։

ՇՈՒՇԱՆԷ ՊՍԱԿ։

3 Օրինակ անմեղութեան,
Դաշտի սիրուն դու շուշան,
Ե՛կ զարդ եղի՛ր մեր սրտին,
Ե՛կ, միացիր մեր երգին։ լա լա լա և այլն։

ՄԱՆՈՒՇԱԿԷ ՊՍԱԿ

4. Ընկիւ սիրուն մանուշակ,
Ջամեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքոյշ հոտ անուշիկ։ լա լա լա և այլն.

ԿԱՂՆԻ ՊՍԱԿ

5. Կանաչ խոտը դաշտերի,
Մեր սրտին է սիրելի,
Թող ճիւղը կաղնի ծառին,
Պսակ լինի մեր գլխին։ լա լա լա և այլն։

ԲՈԼՈՐԸ։

6. Սիրուն կանաչ պսակին,
Թող միանանք բարեկամք,
Մեր յոյսերը անբաժան
Մնան մեզնից յաւիտեան։

№ 21

ԳԻՒՂԱՑՈՒ ԵՐԳ

1. Գիւղացին ո՞նց է անում
Իր արտումը բանելիս,
Ամիսն քրտինք թափելիս,
Երբոր ցորեն է ցանում։
Գիւղացին ո՞նց է անում։
Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը ցանում է։
Լա լա լա լա լա լա } կրկնել.
Լա լա լա լա լա լա լա։

2. Գիւղացին ո՞նց է անում,
Իր արտումը բանելիս,
Սիրուն ցորենը հնձելիս,
Աշխատելով անդադրում։
Գիւղացին ո՞նց է անում։
Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը հնձում է։ լա լա լա Լայն։

3. Գիւղացին ո՞նց է անում,
Երբ անհամար հասկերը
Ծածկում են արտերը,
Եւ իւր ցորենն է կրում։
Գիւղացին ո՞նց է անում,
Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը կրումէ։ լա լա լա Լայն։

4. Գիւղացին ո՞նց է անում
Երտիցը յետ դառնալով,
Ամբարը լի ցորենով,
Երբ իւր ցորենն է կալսում։
Գիւղացին ո՞նց է անում։
Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը կալսում է։ լա լա լա Լայն։

5. Գիւղացին ո՞նց է անում,
Իւր խրճիթը յետ գալիս,
Պարզ անկողին մտնելիս,

Բուք քամուց անհոգ լինում։
Գիւղացին ո՞նց է անում,
Այսպէս քնում է խաղաղ,
Սիրտը հանգիստ և ուրախ։ լա լա լա Լայն։

6 Այս անհոգ գիւղացին
Յետ ծանր աշխատանքից,
Նոր ոյժ, նոր սիրտ է առնում,
Զբոսնում և երգում։ լա լա լա Լայն։

№ 22

ԳԱՐՈՒՆ

1. Ահա եկաւ մեր գարուն,
Եւ զարդարեց դաշտերուն,
Գոյն գոյն ծաղկունք մեղ բերեց
Սիրուն գարուն մեր գարուն։
Գոյն գոյն ծաղիկներ
Գնանք քաղելու,
Տերին փառք տալու։

2. Ձմեռան չորցած գետինը
Տեսէք ի՞նչով է ծածկած,
Կարմիր դեղին շուշանը
Ձորս բոլորն են սփռուած։ գոյն Լայն։

3. Մի քայլ առաջ մենք իսկոյն
Տեսնումենք վարդ գոյն ըզգոյն,
Վարդի միջեն սոխակներ,
Երգումեն միշտ անհամբեր։ գոյն և այլն.

4. Վարդի թփեր կարգ 'ի կարգ
Բնութիւնից բուսել են,
Իսկ նոցա մէջ բարդ 'ի բարդ
Մանուշակներ բուրումեն։ գոյն և այլն։

№ 23

Մանուկ և Թիթեռ

ՄԱՆՈՒԿ

1. Սիրուն Թիթեռ ինձ ասա,
Թէ ինչով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղումես,
Ինչպէս է, որ չես յոգնում։

ԹԻԹԵՌ

2. Սիրուն կանանչ դաշտերում
Այս ապրում եմ համարձակ,
Ծաղկանց բուրմունքը անուշ
Իմ կերակուրն է միակ։

3. Բայց իմ կեանքս շատ կարճէ,
Թռող ուրեմն վայելեմ,
Բարի եղի՛ր, ով մանուկ,
Խնայի՛ր ինձի ձեռք մի տար։

№ 24

ՁԱԳՈՒԿ ԵՒ ԿԱՏՈՒ

1. Մեր ձագիկը փոսում նստած քընում է,
Ա՜խ, խեղճ ձագիկ, հիւանդ ես դու,
Որ չես ուզում կուտ ուտել։
Ձագն ուտումէ (3 անգամ)։
2. Ձագիկ մեր չար կատուից զգուշացիր,
Նա ունի սուր սուր ճանկեր,
Կարող է քեզ մնասել։
Ձագիկ թռաւ (3 անգամ)։

№ 25

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Մենք երաժիշտներ ենք,
Շատ նուագարաններ լաւ զարնումենք,
Ունինք ջութակ, տաւիղ, սրինգ,
Դաշնամուր, ծնծղայք և թմբուկ։
Օրօրինակ, զօրօրինակ, այ ձեղ, ջութակ։

պիլե լե լե լե, պիլե լե լե,
Այսպէս մենք զառնումենք,
պիլե լե լե լե, ա՜յ, ա՜յ, ա՜յ,
Այսպէս մենք զառնումենք։
Ա՜յ ա՜յ, ա՜յ, այսպէս մենք զառնումենք։

2. Կրկնել և փոխանակ ասելու ջութակ, ասել այ ձեզ տաւիղ։ պի—ի—ի—ի և այլն ց՝վերջ։

3. Կրկնել և ասել, ա՜յ ձեզ սրինգ. տիւ լիւ և այլն։

4 Կրկնել և ասել, ա՜յ ձեզ դաշնամուր. տա լա և այն.

5. Կրկնել և ասել, ա՜յ ձեզ ծնծղայք ծին ծա և այլն.

6. Կրկնել և ասել, ա՜յ ձեզ թմբուկ, բում և այլն.

7. Կրկնումեն և բոլոր գործիքների ձևերը ներկայացնում, օրինակ, ջութակի, տաւիղի, դաշնամուրի, ծնծղայի և թմբուկի։

№ 26

ՓՈՔՐԻԿ ՈՐԲԻԿՆԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՑ ՈՐԴԻՔՆ ԵՆ

1. Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց թագ կացաւ։

2. Փոքրիկ աստղերը ամպում ծածկուեցան
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան։

3. Ամեն մարդ գնաց իրան տուն հասաւ,
Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ։

4. Միայն խեղճ որբը չունի հայր և մայր,
Չունի բարեկամ, ոչ քոյր, ոչ եղբայր։

5. Անտէր մնացած աստուծոյ կամքին,
Խեղճը քնած է փողոցի միջին։

№ 27

Ծաղիկների երգ

ՎԱՐԴ

1. Ինձ ամենքը կոչումեն
Ծաղիկների թագուհի,
Որովհետև ծաղիկս
Կարմիր գոյն ու հոտ ունի։

2. Թէև իմ կանաչ թուփը,
Շատ մարդու ձեռք կը ծակէ.
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամեն մարդ կ՝ներէ։

ՇՈՒՇԱՆ

3. Իմ սպիտակ կոկոնում
Ընուշ բուրմունքներ կան շատ,
Եւ ոսկէ նման փոշի
Մեղուներին բազմաշխատ։

4. Իմ ցողունքս նազուք,
Իմ գագաթս գեղեցիկ,
Տերևներս ընդարձակ
Եւ ինքս եմ խիստ հեզիկ։

5. Իմ հիւրասէր թերթերում
Մեղու, մրջիւն, թէ թիթեռ,
Կարող են հանգիստ գտնել,
Իբրև ազնիւ զեռուններ։

ՑԱՓՐՈՒԹ

6. Իմ թուփերս փարթամ չեն,
Ո՛չ ծաղիկս փառաւոր,
Բայց բուրմունքս կ՚լսեն
Ամեն մարդիկ հեռաւոր.

7. Այս պատճառաւ կարող է.,
Յափրուզի գտնել ամեն տեղ,
Թէ փոքրիկ պարկ փունջերում,
Թէ պարտիզներում շքեղ։

№ 28

ԽՄԲԻԿ (ՊԱՐ-ԵՐԳ։)

1. Ջանանք մեր խմբիկի մէջ
Միշտ շնորհքով լինելու,
Մեր ուրախ խաղի մէջ կարգ, կարգ, կարգ,
կարգ աշխատենք պահելու.
Սերը, սերը մեր գործի մէջ թագաւորէ,
Եւ օգտակար նա պտուղներ բերէ։ կրկնել։

№ 29

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ (ՊԱՐ-ԵՐԳ)

1. Դաշտերը կանաչ են,
Ծաղիկները շատ սիրուն,
Թռչնիկները ոստնում են և երգում
Ծառերի ստուերում,
Կարծես մեզ են խնդրում
Ձ՚խանգարել իրանց անուշ քէֆում։
Լա լա լա լա լա լա լա լա լա լա։ կրկնել։

2 Դէհ մենք էլ պար բռնենք,
Ուրախութիւն անենք.
Թև թևի տանք և երգելով շրջենք.

Այսօր ուրախ լինենք,
Ուրախ ժամ վայելենք.
Ուրախ ենք, զուարթ են, այժմ մենք։

3 Փոքրիկ թռչնիկները
Են նուագածները,
Մենք էլ ոստնունք, երգենք ու պարենք,
Խաղը շարունակենք,
Դեռ արև տեսնումենք։
Ա՛հ, ուրախ ենք շատ զուարթ ենք մենք։

№ 30

ԼԱՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

1. Մի փոքրիկ հայ դպրոցի մէջ ուսանում էին յիսուն հոգի աշխատասէր լաւ աշակերտներ։
Նոքա ամենքը բարեսիրտ էին,
Իրանց ծնողաց միշտ պատվում էին,
Իրանց դասերը լաւ սերտում էին։
Ամեն առաւօտ կանուխ վեր կենում,
Երեսները սառ ջրով լուանում,
Գլուխները սանդրում, մաքուր հագնվում։
Եւ մի բաժակ թէյ հացի հետ խմում,
Ապա պատրաստվում և դպրոց գնում։
Մենք ամենքս էլ աշխատենք նոցա օրինակ առնել մենք ամենքս էլ աշխատենք մեր պարտքերը ճանաչել, բայց ով որ այս չգիտե, գովելու արժանի չէ։

Հանրային գրադարան
Պետական Գրադարան
7/XI-1922
Ա. ՄՅԱՍ. Ի. ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3650

0008107

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0008107